

անունը՝ Սակայն Ամանորը շարունակում է թթավառել՝ նաև այս առմարում։ Այդ պատճառով, ինչպես մեր քննարկած մասնագրական տոմարական նյութերը ցույց են տալիս, նավասարդը օգտագործվում էր և որպես տարվա առաջին ամսի, և որպես Տարեմուտի, Ամանոր տոնի անվանում։ Նավասարդը, որ կապված էր տարվա առաջին ամսի հետ և ավելի հասկանալի էր իր Տարեմուտ, Ամանորի իմաստով, աստիճանաբար դուրս է մղում Ամանոր բառը և բռնում նրա տեղը։

Հայկական տոմարի առանձնահատկության համաձայն, Ամանորը շարժական էր։ Սակայն հեթանոս Հայաստանում առմարական հաշվումները ճիշտ կատարելու համար պայմանականորեն Ամանորը համարում էին օգոստոսի 11-ը, Հայկյան շրջանի ապոկաստագի օրը⁴², Վերջինս նավասարդի մեկին համընկնում էր մ. թ. ա. 428 թ.։ Այս թիվն էլ հեթանոսական Հայաստանում

պայմանականորեն հիմք էր ընդունված տոմարական հաշվումների համար։ Պաշտոնական տոնացույցներում այդ օրը շարժական էր։ Սակայն նույն տոնացույցի առանձնահատկության համաձայն, ամիսներն արդեն իրենց հերթական տեղն ունեին, և նավասարդը հայկական անշարժ ամսացուցակում առաջին ամիսն էր, նոր տարվա տոնի կրողը։

Ամանորի այս պայմանական սկիզբն էլ մտնում է տոմարագիտության մեջ և անցնում գրավոր աղբյուրներին։

Պաշտոնական տոմարի մեջ կատարվող փոփոխությունները, բնականաբար, աստիճանաբար մտնում էին նաև ժողովրդի կենցաղի մեջ և ամրանում այնտեղ։ Մանավանդ այդպես էր այն տոների հետ, որոնք պաշտոնական տոմարից անկախ պոլյություն ունեին ժողովրդի կենցաղում, ինչպիսին էր նավասարդը։

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՏՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ XIX—XX ԴԴ.

XX դ. սկզբին Հայաստանի մի քանի աղյուսակային շրջաններում նավասարդը դեռ հիշվում էր տոնվում էր որպես նոր տարվա տոն։ Միայն վերջին 50 տարվա ընթացքում է այն դուրս մղվել ասպարեզից և իսպառ մոռացվել նույնիսկ այն շրջաններում, ուր մինչ այդ տոնվել էր որպես նոր տարի։ Այսպես, Եր. Լալայանի հաղորդման համաձայն, Ախիսանում և Զանգեզուրում նավասարդի մեկը աստիճանաբար է համարվել¹։ Ասկայն 1959 թ. այդ շրջաններում կապարած մեր շրջադաշտայինների ժամանակ նման ոչ մի բանի չհանդիպեցինք։ Ըստ որում, հատկապես եղանք այն դիտելով, որոնք մատնանշում է Եր. Լալայանը։ Գորիսի շրջանի դիտելով (Քարահունջ, Շինուհայր, Խանածախ) մի քանի ծերունիներ

հիշում էին, որ մինչև 1920-ական թվականները նավասարդը համարվել է նոր տարի։ Դրանից հետո նավասարդի տոնը, որպես նոր տարվա տոն, մոռացել են։ Բայց նրա հետ կապված ծիսական որոշ սովորույթներ հիշվում են տակավին²։ Դրանցից են հատկապես տների երգիկներից շարոց կախելը, նվերներով իրար այցելելը և մանավանդ այդ օրը անպայման հաբիսա եփելու սովորությունը։

Նույն երեւոյթի տեղի է ունեցել նաև Հին Նախիջեանի հայերի կենցաղում։ Եթե Ա. Զելինսկու հաղորդած տվյալներով դեռևս անցյալ դարի վերջերին նավասարդի տարեմուտ լինելու վերաբերյալ հավաստալիքները այդ շրջանի բնակչության կենցաղում որոշակի տեղ էին դրվում, ապա այժմ, մեղ հայտնի հինգ բնականներից ոչ մեկում, որոնք բոլորն էլ XX դ. 20-ական թվականներին վերաբնակվել են Երևանում, նույնիսկ 60—70 տարեկան ծերունիները չեն հիշում, որ իրենց երիտասարդության ժամանակ նավասարդը տոնված լինի որպես նոր տարի։

Այն քիչ աղյուսակային շրջաններում էլ, որտեղ նավասարդը տակավին հիշվում է որպես նոր տարվա տոն, մոռացված են այդ տոնի հետ

⁴² Ապոկաստագ-Տարին 365 և $\frac{1}{4}$ օր ընդունելով, արեգակնային առմարում 4 տարին մեկ անգամ Ամանորը 1 օրով առաջ էր ընկնում (այսպեղից, այդ տոմարի մեջ տոների շարժական լինելը), և հաջորդաբար համընկնելով ասարվա բոլոր օրերին, որոշ ժամանակից հետո վերադառնում էր իր նախկին տեղը։ Այդ կետն էլ ապոկաստագն է, իսկ այդ ամբողջ ժամանակամիջոցը, որի մեջ թափառում էր Ամանորը, հայերն անվանում էին «Հայկյան շրջան», որ տեղում էր 1468 տարի։ Ապոկաստագի տարին հայերն անվանում էին «Նահանջներու նահանջ» տարի (անհ. Մ. Օրմանյանի և Լ. Անճյոնովի նշված աշխատությունները)։

¹ «Աղյուսակային հանգե», 1998, հ. 7, գ. 1, էջ 249, գ. 2, էջ 106։

² Ա. Ա. Օղաբաշյան, 1959 թ. գիտարշավ, ԱՐԱ, տ. 30, 4, էջ 32։

կապված ծիսական սովորությունները, որոնք առանձին բովանդակություն ու երանդ պետք է տալին առնին: Տեղի է ունեցել նաև հակառակը. պահպանվել են տոնի հետ կապված որոշ սովորություններ, իսկ տոնն ինքը մոռացվել է: Սակայն անկախ այն բանից, Նավասարդը դեռ հիշվում էր որպես նոր տարվա առն, թե ոչ, նրա ծիսակարգի մեջ մտնող որոշ սովորություններ համընդհանուր էին պատմական Հայաստանի բոլոր ազգագրական շրջանների համար: Օրինակ, ալդ օրն ամենուրեք կորկոս (հարիսա) էին ելույթ, որպես նոր սկսվող աարվա դաշտավարական տնտեսության առատությունն ապահովող խորհրդանշան: Այդ օրվա համար համընդհանուր սովորույթ էր նոր խնամիների երգիկից շարոց կախելը: Այլ տեղերում ընդունված էր չոր մրգեղենի կապոցներ կախել ծանոթ-աղոթականների, մանավանդ քավորանց և խնամոնց երգիկներից և աննկատելիորեն հեռանալ: Ըստ երևույթին, այդ սովորությունը մնացել էր այն ժամանակներից, երբ այդ օրը նոր տարվա առթիվ նման օրինակ նվերներով շնորհավորում էին միմյանց³, նույնքան համընդհանուր սովորություն էր նշանված աղջիկներին այդ օրը սկսեցնանց աանից նվերներ (չոր մրգեղենի հետ դլխաշոր, դուլպաներ և այլն) ուղարկելը: Ուրիշ շրջաններում նավասարդի օրը այդպիսի նվերներ հարսնացուի տնից էին ուղարկում փեսացուի առն⁴: Այլ դեպքերում կանայք սրբազան համարվող ծառերի վրա կտրմիր կտորներ էին ձգում և կարմիր թելեր կապում ի նշան ուրախության և այն բանի, որպեսզի գալիք տարին առատ, ուրախ լինի և կարմիր (ուրախ) օրեր շատ լինեն⁵:

Ձանգեգուրում, օրինակ, այդ օրվա գիշերը

³ Վարդգես, Հայոց սովորություններից (հիշողություններ), «Նոր-Դար», 1886, № 211, Տե՛ս նաև՝ ԱՐԱ (Ա. Օգարաշյանի հավաքած նյութեր):

⁴ «Ազգագրական հանգես», 1900, հ. 2, էջ 249, 1898, հ. Գ, գ. 2, էջ 71:

⁵ Հիշենք նաև նոր տարվա երգերի մեջ՝
Լիքը հորեր շատ ունենաք,
Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենաք միշտ կուշտ փորով:

Հմայական ընսպաշտական մտայնությամբ, սրբազան ծառերին հազուադեպից տրված գունավոր, մասնավորապես կարմիր կտորներ կապելով կարծում էին, թե կարելի է անհաղորդությունից, հիվանդությունից ազատվել: Այսպիսի սրբազան ծառեր պատմական Հայաստանում շատ են եղել և հիմա էլ որոշ տեղերում գեո կան: Տե՛ս ԱՐԱ, Ա. Օգարաշյանի գաղտնային նյութեր:

գոմերը մաքրում էին, անասունների տակ դարիցանում, իսկ եղջյուրներին կարմիր թել էին կապում, որպեսզի տարին առատ լինի և «կարմիր օրերով» անցնի⁶:

Պատմական Սյունիք նահանգում, որտեղ մեկիքական տներն իրենց դոյուքյունը պահպանեցին շատ երկար, սովորություն կար, որ նավասարդի օրը դյուղի յուրաքանչյուր օջտից ամենաաարիքավորը և պաակառելին վերցնում էր մի շիշ օղի կամ դինի, մի խնձոր՝ վրան 15—30 կոպեկ և դնում Մեկիքի նոր տարին շնորհավորելու: Սա էլ երախտահատույց լինելու համար մի երկու եղ էր մորթել աալիս և դաշտում բոլորին հյուրասիրում ճաշով⁷: Մեկիքական տները վերանալուց հետո նավասարդին նվերներով շնորհավորելու դնում էին տանուտերերի առն և նրա կողմից հյուրասիրվում⁸: Վարսեղայում ընդունված էր այդ ձևով շնորհավորելու դնալ քահանայի տուն, դարձյալ արժանանալով վերջինիս հյուրասիրության⁹:

Ս. Զելինսկին հաղորդում է, որ Նախիջևանի շրջանում ապրող հայերը ունեն նավասարդի տոնակաարության հետ կապված ավանդություններ: Պատմել են, օրինակ, որ նավասարդը նոր տարվա սկիզբն է համարվում, որովհետև այդ օրը հայերը մեծ հաղթանակ են աարել: Այս ավանդությունն, ինչպես հայտնի է, առկա է Մովսես Խորենացու մոտ, ուր նկատի է առնված Բելի դեմ Հայկ նահապետի տարած հաղթանակը: Ուշագրավ է հատկապես նավասարդի հետ աորնչվող ժողովրդի մեջ հարատևող նաև հեռալալ ավանդությունը, որ դարձյալ հիշատակում է Զելինսկին: Մի անգամ Գրիգոր Լուսավորչին հայանում են, թե Տարոն դավառում մի խումբ հայեր դեռևս շարունակում են երկրպագել ընդարձակ տաճարում դրված երեք ոսկյա կուռքերին: Լուսավորչին իր հետ վերցնելով մի սրբի մասունքներ, դալիս է Տարոն և հասնում աաճար նրա մեծ տոնակաասրության օրը: Ուխտավորների բազմության աաաջ նա հրամայում է ջարդել արձանները և նրանց տեղը կանգնեցնել խաչ, իր բերած մասունքների հետ: Սակայն որպեսզի ժողովրդին միանգամից չրարկացնի, թույլ է աա-

⁶ «Ազգագրական հանգես», 1898, հ. Գ, գ. 2, էջ 112:

⁷ Նույն աեղում, 1898, հ. Բ, գ. 1, էջ 259:

⁸ Նույն տեղում, 1898, հ. Բ, գ. 1, էջ 25 և «Ազգագրական հանգես», 1898, № 2, էջ 112, «Ազգագրական հանգես», 1898, հ. Գ, գ. 1, էջ 257—258:

⁹ «Ազգագրական հանգես», 1898, հ. Գ, գ. 1, էջ 349:

լիս շարունակ այդ օրը նշել առնականաարությամբ, իսկ տոնը վերանվանվում է Սուրբ Խաչ¹⁰:

Հաականշական է, որ մինչև այժմ էլ այդ օրը, մանավանդ այն շրջաններում, որտեղ մոռացվել է նավասարդի նոր ասարվա տոն լինելը, անպայման նշվում էր հատուկ արարողություններով: Ավանդությունը հատկապես վկայում է, որ նավասարդը նախաքրիստոնեական Հայաստանի ամենաարածված և սիրված տոներից է եղել, որի հետ հաշվի են նստել նոր տարածվող քրիստոնեության վարդապետներն անգամ և նոր կրոնի անվան տակ այն պահպանել: Ընդհանուր առմամբ, թեև դարերի ճանապարհին մոռացվել էր տոնի հատկապես ծիսական սովորությունների հիմնական մասը, այնուամենայնիվ ժողովրդական կենցաղում և հավատալիքներում շարունակել են հարատեղել զրա հեթանոսական բնապայանական վերապրողները: Նավասարդյան տոնախմբությունների հեթանոսական ծիսակատարությունների միջոցով հին հայերը նպատակ էին հետապնդում երախտահառույց լինել բարեհաջող բերքահավաքի, վերահաս ձմռան անախական ապահովվածության համար այն ասավածությունը, որի հետ զարգացման տվյալ փուլում հայ ժողովուրդը կապում էր նոր տնտեսական տարվա ապահովության ակնկալիքները: Մինչև մեր օրերը պահպանված աղագրական սովորությունները վկայում են, որ նավասարդի առնոր ժողովրդի կողմից իրոք դիվել է որպես բերքահավաքի տոն, գյուղացու աշխատանքային տարվա փակում, որն սկզբնավորվում էր դարնանր և նշանավորվում տնտեսական տարվա սկիզբը հանդիսացող Բարեկենդանի տոնով:

Ա. Զեյնիսկու հաղորդման համաձայն, Նտխիջետնի հայերի մեջ գոյություն է ունեցել մի այսպիսի սովորություն. նավասարդի օրը 10—12 տարեկան տղա երեխաները ջրջել են տնետուն և երգիկից դուրսան իջեցնելով, երգել:

Ակլը մարեմ, մարեմ.

Զեր տղայի սուր կարեմ.

Չամիչ տվեք

Ատամներս շարեմ,

Ընկուղ տվեք

Ճակախս դնեմ

Նուշ ավեք պորտս ոլորեմ:

Իսկ տնեցիք ներքեից մրդեղեն են լցրել

¹⁰ «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (այսուհետև՝ СМОМПК), вып. II, отд. II, էջ 20.

դուրսան, որը նրանք վերե են բարձրացրել և բուրբ միասին կերել¹¹:

Հիշյալ երգն ու սովորությունը որոշ աղագրական շրջաններում նույնությամբ կրկնվել են Բարեկենդանին, նավասարդին և քրիստոնեական Նոր տարուն և իրենց նմանողական-հմայական բովանդակությամբ առնչվել են վերահիշյալ տոների ժամանակ կատարվող նույնանման ծեսերին ուղեկցող երգերին և հավանաբար ժամանակին եղել են տնտեսական բարեկեցությունն ապահովող հմայական ծեսերի պարտադիր ուղեկիցներ: Այն ամենը, ինչ պահանջվում էր երգով, յուրաքանչյուր գյուղացու առանձին կարող էր դանվել միտյն բերքահավաքից հետո, երբ ամբողջ տնտեսական ասարվա արդյունքն արդեն ամբարված էր շանարաններում: Երգն ստեղծողները հենց այդ էլ նկատի են ունեցել: Իսկ այդ նույն օրը երեկոյան կորկոտ և չոր մրդեղեն ուսելու պարտադիր սովորությունն արդեն ակնհայտորեն խոսում է այն մասին, որ դրանք իսկապես եղել են բարեհաջող բերքահավաքից հետո բնության ուժերին նվիրված շնորհակալական-դճարեական նախկին ծեսերի արտահայտություններ:

Բարեկենդանին, նավասարդին և քրիստոնեական Ամանորին ուղեկցող ծիսական երգերի բովանդակության նույնությունը և հաճախ էլ դրանց բնագրերի ուղղակի կրկնությունը կարելի է բացատրել նրանով, որ դրանք արաահայաել են նույն մտայնությունը և ժամանակին ուղեկցել են դարնանային Նոր տարվա առնականաարությանը: Նոր տարին պաշտոնապես աշուն անդափոխելուց հետո մինչև այդ նրան ուղեկցող ծիսական երգերը նույնպես անդաշարժվեցին: Այդ միևնույն ձևով նրանք հետագայում միացան նաև քրիստոնեական Ամանորին՝ հունվարի 1-ին, իսկ տպա նաև Քրիստոսի ծննդյան տոնին:

¹¹ Նույն անգամ: Երգի տարբերակն ունենք նաև Սալմաստից, ուր նվիրվող տոնին (Նավասարդ) 8—12 տարեկան երեխաների խումբը տնետուն շրջելով, կրկնակից դուրսան էր կախում և երգում.

Ակլե մարեմ, մարեմ, մարեմ,

Զեր տղայի սուր կարեմ.

Չամիչ տվեք առամներս շարեմ,

Ընկեղ տվեք՝ փորս լարեմ,

Շաքար ավեք՝ շայ խմեմ,

Պնդուկ ավեք՝ սիրաս ուղելի,

Կարկուտ տվեք՝ փորս լցնեմ.

Քյոխվա առնտեր, մի խնայի

Աստված ձեր խարս ու փեսան պախի:

Մ. Ուսումնասիրելի, Խլվիկ, «Արձագանք», 1893, № 1 (անս. Վ. Բղդյան, Հայ ժողովրդական խաղեր, Երևան, 1963, էջ 141):

Այս առիթով պետք է նշել, որ Ամանորի նախաքրիստոնեական առներից Բարեկենդանի հետ կապված ծիսական սովորություններն անհամեմատ ավելի լավ պահպանված վիճակում են մեղ հասել, քան Նավասարդին: Նկատենք, որ Նավասարդի հետ աղերսվող սովորություններից մեղ հասել են այնպիսիք, որոնք իրենց ծագման պատճառներով և բովանդակությամբ նույնական են Բարեկենդանի ծիսական սովորություններին: Բայց այդ, ինչպես արդեն հիշատակվել է, կան նաև այնպիսի սովորություններ, որոնք կրկնվում են և՛ Բարեկենդանի, և՛ Նավասարդի ծիսաշարքում: Նման կրկնությունները բնապաշտական նույն կամ նման մաայնության արտահայտություններից բացի, նույնական լինելու համար ունեցել են նաև այլ հիմքեր:

Նավասարդ ամսին կաարվող տոներ մինչև տրեդակնային առմարով Նոր արվա օր դառնալն արվեն գոյություն ունեւ որպես բերքահավաքի տոն: Այդ են վկայում Նավասարդի հետ առնվող ծիսական այն սովորություններ, որ հայ դուպագին դարերի խորքից բերել, հասցրել է մինչև մեր օրերը: Եվ պատահական չէ, որ Նավասարդը այդ ճանապարհին կորցնելով շատ հատկանիշներ, պահպանել է հենց այն ծիսական սովորություններ, որոնք ակնարկում են բերքահավաքի հետ ունեցած նրանց և առնի բացահայտ առնչակցությունը:

Նավասարդյան բերքահավաքի ծիսական փնջի վերապրուկների մի մասը, միաձուլվելով Ասավածածնի տոնին, հասել է մինչև մեր օրերը: XIX դ. Ասավածածնի առնին կատարվում էր խաղողօրհնների ծեսը, որը հատկապես անտեսական երանյ էր ձեռք բերել Արարատյան դաշտում, ուր միայն այդ օրվանից սկսած էր թույլատրվում վաճառել կամ օգտագործել արդեն հասունացած խաղողը: Այժմյան Մարտունու շրջանում ապրող նախկին ալաշկերացիների մեջ արածված է եղել դրա հետ առնվող մի սովորություն ևս: Մինչև XX դարի 30-ական թվականներն էլ ընդունված էր համայնքից (Վերին Ղարանլուղ) դրամ հավաքել և այդ նպատակով հատուկ բնարած մարդկանց ուղարկել Արարատյան դաշտ՝ խաղող բերելու, որը ճանապարհին Առանի վանքում օրհնել աալուց հետո բաժանվում էր դուղի բնակիչներին: Այնուհետև միայն կարելի էր դուղ բերած խաղողը գնել և ուակել¹²: Ալաշկերտցիները մինչև բարձրագիւր և խստաշունչ Սեանի ավազան դաղթելը,

իրենց նախկին ընօրընում, զբաղվել են խաղողագործությամբ և այդ պատճառով էլ պահպանել դրա հետ կապված ծիսական հուշը:

Ինչ վերաբերում է Նավասարդյան տոնախմբությունների և Աարիամ Ասավածածնի առնի խաչավորման փաստին, ապա այն համըհհանուր էր ամրողջ Հայաստանի համար և կապվում էր քրիստոնեության մուաքի հետ: Անահիտ դիցուհու պաշտամունքը, որ այնքան սարածված էր նախաքրիստոնեական Հայաստանում, նորոմուտ քրիստոնեության համար ամենամեծ վտանյ էր: Պետական կրոն դառնալու առաջին քայլերի հետ, քրիստոնեությունը ներառավ ժողովրդական պանյվածների մեջ առանձնահատուկ սեյ ունեցող Անահիտ դիցուհու տոնական ցիկը և մոռացնել աալու նպատակով այն կապեց Մարիամ Ասավածածնի հետ¹³:

Նավասարդի տոնակատարության սաույդ ժամանակը նույնպես որոշ շրջաններում մոռացվել է, իսկ որոշ տեղերում՝ տեղաշարժվել: Այսպես, Խնձորեսկ, Շինուհայր, Խանածախ պուղերում Նավասարդի առնակատարությունը, որ իր ծիսական արարողություններով ժողովրդի մեջ պահպանվել էր մինչև XX դ. 20-ական թվականները, տեղաշարժվելով, վերջնականապես հաստատվել է նոյեմբերի կեսերին, որոշ տեղերում այն տոնվում է օգոստոսի կեսերից մինչև դեկտեմբեր ընկած ժամանակամիջոցում: Ներկայումս Մարտունու շրջանում ապրող պատմական Դարոյնք, Կողովիա և Բադրեանդ դավառներից դաղթված հայերի մեջ, թեպետ Նավասարդն իրեն Նոր տարվա տոն կենցաղից բոլորովին դուրս է եկել, սակայն ոմանք մինչև այժմ էլ հիշում են, որ այն հոռավոր անցյալում հայերի մեջ եղել է Նոր տարվա առն:

Նավասարդը թե՛ ժամանակի, թե՛ բովանդակության տեսակետից եկել, մոռացել է քրիստոնեական Նոր տարուն՝ հունվարի 1-ին և իր հատկանիշները հաղորդելով վերջինիս, ձուլվել է նրան: Միայն թե հունվարի 1-ը քրիստոնեական այլ անունների կողքին (Նոր տարի, Կադանդ) ունի նաև «Նավասարդ» անունը՝ «Նոր տարի» իմաստով: Բացի այդ, Նավասարդ տոնի որոշ ծիսական սովորություններ դեթե նույնությամբ անցել են Նոր արվա առնին¹⁴:

¹³ Մ. Օրմաեյան, Միական բառարան, էջ 36, 4. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, էջ 138—156:

¹⁴ Տե՛ս Ա. Ա. Օղաբաշյան, Նոր տարվա տոնակատարության ժամանակի հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, նույնի՝ Քրիստոնեական ամսնորի մի

¹² Ա. Ա. Օղաբաշյան, 1959 թ. Մարտունու գիտաբանական հանգում, տ. № 3, էջ 18:

Որոշ շրջաններում էլ մոռացվել է նավասարդի առն լինելը և այն հիշատակվում է որպես միայն անտեսական պայմանագրությունների սահմանագիծ: Այդպես է, օրինակ, Իջևանի շրջանի Աշաշուր և Ուղունթալա (այժմ՝ Այդեհովիա) գյուղերում, ինչպես նաև Արարաթյան դաշտում, այժմյան Հոկտեմբերյանի շրջանի Փշատավան և Զանֆիդա գյուղերում ապրող, Արևմտյան Հայաստանից դադարած հայերի մեջ: Զնայտ Պորիսի շրջանի մի շարք գյուղերում նավասարդը դեռ հիշվում է որպես առն և նոր ասարվա սկիզբ, սակայն հարևան Քարտհունջ գյուղում մոռացվել է նրա առն լինելու հանգամանքը. գիտեն միայն, որ դա մի օր է սեպտեմբերի սկզբից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակամիջոցում: Եվ դարնանր, երբ ամասունները պահ տալիս պայման են դնում, լգարտականությունների և իրավունքների սահմանադիժը համարում են մինչև նավասարդ:

Աղագրական որոշ շրջաններում այս երեւոյթն սկսվել էր արդեն XIX դ. երկրորդ կեսերից: Այդ սութիվ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ս. Քամալյանցը՝ Արցախի, Ուտիքի, Այունիքի, Աղվանքի և Այրարատի վերարերյալ: Պեղկով, որ վերը նշված շրջաններում ժողովուրդը նավասարդը որպես նոր տարի տոնում է խոր աշնանը, սյգեկութից հետո, նա ավելացնում է, որ այդ նույն դավառներում նավասարդը համար-

դում է անտեսական պայմանագրությունների ւահմանագիծ¹⁵,

Այս սովորության մեջ ևս տեսնում ենք վերապրուկային արձագանքն այն ժամտակների, երբ բերքահավաքին նվիրված նավասարդ տոնը դիտվում էր որպես անտեսական տարվա ավարտին նվիրված տոն: Ըստ որում այն վերաբերում էր ոչ միայն երկրագործական աշխատանքներին, այլ նաև անասնապահությանը:

Հայանի է, որ անտեսականության ընագավառում անտեսական տարին սկսվում էր ավելի շուտ և վերջանում ավելի ուշ, քան երկրագործության: Բերևս այս է պատճառը, որ երկրագործության մեջ նավասարդը անտեսական ասարվա ավարա ընկալելուց հետո, սեղական պայմանների համաձայն, հաճախ տեղաշարժերի էր ենթարկվում: Նավասարդի անտեսական պայմանադրությունների ժամանակակեա լինելը մեզ հայտնի է XIX դ. երկրորդ կեսերից սկսած, երբ ժողովուրդն արգեն մոռանում էր նավասարդի ամանորյա ծիսական սովորությունները, իսկ կենցաղում քրիստոնեության հաստատման հետեանքով մոռացվում էր նաև նավասարդի նոր տարվա տոն լինելը: Այդ բոլորի հետեանքը լինում է այն, որ անտեսական պայմանագրությունների ժամտակակեա ընկալվող նավասարդն սկսվում է տվյալ միջավայրի պայմաններին համապատասխան տեղաշարժել կատարել:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆՆ ԻՔՐԵՎ, ԱՄԱՆՈՐԻ ՏՈՆ

Աղագրական նյութերի անդամ թեթեակի քննարկումը ցույց է տալիս, որ ժողովրդի կենցաղում Բարեկենդանն անվերապահորեն կասվում է Մտրտ ամսի հետ, սակայն որոշ տեղաշարժումներով: Պատմական Հայաստանի բոլոր աղագրական շրջաններում Բարեկենդանը տոնվում էր Առաջավորաց սլասից (սուրբ Աարդիս) հետո, Մեծ պասին նախորդող վերջին երկու շաբաթվա ընթացքում:

Որոշ շրջաններում Բարեկենդանը տոնում էր երկու շաբաթ, Մեծ պասին նախորդող վերջին երկու շաբաթվա ընթացքում: Այսպես էր, ըստ մեր հավաքած դաշտային նյութերի, այժմյան Գորիսի, Մեղրու, Ղափանի, Ապարանի, Մարտու-

նու, Շամշադինի, Հրսեղանի, Իջևանի, Աշարակի, Հոկտեմբերյանի, Արտաշատի, Նոյեմբերյանի շրջաններում, ըստ գրավոր աղբյուրների՝ Գանձակում¹, Զավտխքի գյուղերում², Զանգեզուրում³:

Այլ շրջաններում Բարեկենդան համարվում էր Մեծ պասին նախորդող մեկ շաբաթ: Այդպես էր, ըստ գրավոր աղբյուրների, Վարանդայում⁴, Երևանի նահանգի նախիջևանի գավառում⁵, Զավախքում⁶ և այլուր:

¹⁵ Ս. Քամալյանց, Երկասիրութիւններ, առաին կապուկ, Թիֆլիս, 1896, էջ 153:

¹ «Աղագրական հանգես», 1900, հ. 2, էջ 364:

² «Աղագրական հանգես», 1897, հ. Բ, էջ 254:

³ «Աղագրական հանգես», 1898, հ. Դ, գ. 2, էջ 107:

⁴ «Աղագրական հանգես», 1898, հ. Դ, գ. 1, էջ 341:

⁵ С.М.ОМПК, выпуск II, стр. 21—22.

⁶ «Աղագրական հանգես», 1897, հ. Բ, էջ 254:

քանի ծիսական վերապրուկների մասին, ՀԱԱՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաւ. գիտ), 1965, № 3: